

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱՐԱՄԱՅԻՍ, ՀԱՄԱՍՓՅՈՒՌ, ԱՐՄԻՆԵ, ԱՐՄԱՆ, ԱՐՇԱԿ, ԼԵՎՈՆ, ՄԱՆՈՒՇԱԿ ԱԼԻԿԱՆՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 419-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1769 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Արամայիս, Համասփյուռ, Արմինե, Արման, Արշակ, Լևոն, Մանուշակ Ալիխանյանների և այլոց դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈՒ-1769 որոշմամբ (հրապարակվել է 2025 թվականի փետրվարի 14-ին) որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանում գործին չմասնակցած անձի կողմից, որը նույն դատարանի վճռի կամ որոշման կայացման պահին չի ունեցել այդ դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանի կողմից խախտված ճանաչվելու դեպքում նոր հանգամանքով

դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը ճանաչել Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր (...):

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-1769 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ



եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Սահմանադրական դատարանի որոշման առանցքում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի (այսուհետ նաև՝ Միջազգային դատարան) կողմից Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստն արձանագրող և ուժի մեջ մտած վճռի կամ որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորության առանձնահատկություններն են այն անձանց մասով, որոնք չեն դիմել Միջազգային դատարան իրենց իրավունքների պաշտպանության հարցով:

Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 419-րդ հոդվածի 1-ին

3


մասի 2-րդ կետը, որոշմամբ ներկայացված պատճառաբանությունների հիման վրա, եկել է այն եզրահանգման, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանում գործին չմասնակցած անձի կողմից, որը նույն դատարանի վճռի կամ որոշման կայացման պահին չի ունեցել այդ դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող դատարանի կողմից խախտված ճանաչվելու դեպքում նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սահմանափակումը հակասահմանադրական է:

Փաստորեն, նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը, Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված կարգավորումը համարելով որպես սահմանափակում կոնկրետ անձանց նկատմամբ, որոշել է, որ Միջազգային դատարանի՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտումը ճանաչող և ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն առանց որևէ նախապայմանի պետք է նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք բերելու հիմք հանդիսանա այն անձանց համար, որոնք միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան չեն ունեցել այդ դատարան դիմելու իրավունք:



Անդրադառնալով Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերաբերյալ Սահմանադրական դատարանի պատճառաբանություններին և քննարկվող իրավանորմի առնչությամբ տրված եզրահանգմանը՝ նախևառաջ հարկ եմ համարում վեր հանել վիճարկվող դրույթի բովանդակությունը:

Այսպես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ եթե անձը տվյալ վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել է այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն²:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերոնշյալ հիմքում ընկած է անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը, որը տվյալ դեպքում կարող է դրսևորվել Միջազգային դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված իրավունքի վերականգնման միջոցով, մասնավորապես՝ որպես *restitutio in integrum* սկզբունքի երաշխավորման միջոց օրենսդիրը նախատեսել է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի վերանայման հնարավորություն

¹ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի ՀՕ-182-Ն օրենքի 5-րդ հոդվածով Օրենսգրքի վիճարկվող դրույթը՝ 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «հնարավորություն» բառից հետո լրացվել է «կամ միջազգային դատարանը հաստատել է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը (բարեկամական կարգավորումը) կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված միակողմանի հայտարարությունը» բառերով:

² Սույն կարծիքում արտահայտված դիրքորոշումները ներկայացվում են իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կապակցությամբ:

5


Միջազգային դատարանի որոշման հիմքով: Ավելին՝ նոր հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման պարագայում անձի իրավունքների պաշտպանության ապահովումը գերակայում է *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքին, քանի որ նշված ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է անձի խախտված իրավունքների վերականգնումը: Փաստորեն, օրենսդիրը, Միջազգային դատարանի ուժի մեջ մտած վճիռները կամ որոշումները ճանաչելով որպես նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք, ըստ էության, նախատեսել է արդարադատության իրականացման ընթացքում թույլ տրված թերությունները շտկելու կառուցակարգ, քանի որ դատական ակտի վերանայման քննարկվող հիմքը կասկածի տակ է դնում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունը:

Միաժամանակ օրենսդիրը իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորություն է ընձեռել երկու կատեգորիայի անձանց համար, այն է՝

1) անձինք, ովքեր իրենց իրավունքների պաշտպանության խնդրով դիմել են Միջազգային դատարան, և այդ դատարանի ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է այդ անձանց՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը,

2) անձինք, ովքեր թեև իրենց իրավունքների պաշտպանության խնդրով չեն դիմել Միջազգային դատարան, սակայն Միջազգային դատարանի խախտումն արձանագրող վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել են այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:

Նկատի ունենալով, որ սույն դիմումով քննության առարկա է հանդիսանում վիճարկվող դրույթով նախատեսված 2-րդ դեպքը, ապա սույն հատուկ կարծիքի

6


վերլուծությունները և դիրքորոշումները կներկայացվեն միայն նշված դեպքի առնչությամբ:

Այսպես՝ վիճարկվող դրույթի բովանդակությունից հետևում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման իրավունք ունեն նաև այն անձինք, ովքեր թեև իրենց իրավունքների պաշտպանության խնդրով չեն դիմել Միջազգային դատարան, սակայն Միջազգային դատարանի խախտումն արձանագրող վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել են իրենց իրավունքների պաշտպանության խնդրով Միջազգային դատարան դիմելու իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն: Նշված կարգավորումից հետևում է, որ օրենսդիրը նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունքի իրացման նախապայման է համարել նաև համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան Միջազգային դատարան դիմելու իրավունքն իրացնելու հնարավորության առկայությունը:

Նկատի ունենալով, որ սույն գործով որպես նոր հանգամանք ներկայացվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) որոշումը, ապա տվյալ դատարան դիմելու իրավունքն իրացնելու հնարավորությունը բացահայտելու համար հարկ է անդրադառնալ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) նախատեսված կարգավորումներին: Այսպես՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասն իրավահարաբերության ծագման պահի դրությամբ³ սահմանում էր, որ Եվրոպական դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ

³ Կոնվենցիայի՝ 2021 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած 15-րդ արձանագրության 4-րդ հոդվածով Եվրոպական դատարան դիմելու ժամկետը սահմանվել է չորս ամիս:



սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ Եվրոպական դատարանի կողմից գործը քննության ընդունելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանների միաժամանակյա պարտադիր առկայությունը՝ անձը պետք է սպառած լինի միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները և ներպետական վերջնական որոշումը կայացնելու օրվանից լրացած չլինի վեցամսյա ժամկետը: Իսկ նշված պայմաններից որևէ մեկի բացակայությունը բացառում է Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճռի կամ որոշման հիման վրա նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հնարավորությունը: Այսպիսով՝ վիճարկվող դրույթը բավարար հստակությամբ սահմանում է Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճռի կամ որոշման հիման վրա նոր հանգամանքով դատական ակտի վերանայման նախապայմանները՝ հնարավորություն ընձեռելով անձանց համատեղելու իրենց վարքագիծը վիճարկվող դրույթի պահանջների հետ և կանխատեսելու իրենց դրսևորած վարքագծի հնարավոր հետևանքները:

Փաստորեն, ինչպես արդեն նշվեց վիճարկվող դրույթը սահմանում է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու **հնարավորություն** նաև այն անձանց շրջանակի համար, ովքեր թեև իրենց իրավունքների պաշտպանության խնդրով չեն դիմել Միջազգային դատարան, սակայն Միջազգային դատարանի խախտումն արձանագրող վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել են այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն: Մինչդեռ Սահմանադրական դատարանը եկել է այնպիսի եզրահանգման, որ նշված դրույթը ենթադրում է **սահմանափակում** կոնկրետ

8


շրջանակի անձանց համար՝ այդպիսին համարելով այն անձանց, ովքեր թեև իրենց իրավունքների պաշտպանության խնդրով չեն դիմել Միջազգային դատարան և միաժամանակ չեն պահպանել Միջազգային դատարան դիմելու իրավունքն իրացնելու համար միջազգային պայմանագրով նախատեսված պահանջները (ժամկետները), սակայն որևէ այլ անձի դիմումի հիմքով Միջազգային դատարանի վճռով կամ որոշմամբ արձանագրվել է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտում:

Մինչդեռ իմ գնահատմամբ՝ վիճարկվող դրույթով ոչ թե սահմանափակվում է իրենց իրավունքների պաշտպանության խնդրով Միջազգային դատարան չդիմած անձանց կողմից նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման իրավունքը, այլ նշված դրույթով ուղղակիորեն սահմանվում է այդ իրավունքը: Նման պայմաններում գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը քննարկվող որոշմամբ եկել է այնպիսի եզրահանգման, որը չի բխում վիճարկվող դրույթի՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կարգավորումից:

Նկատի ունենալով, որ սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը բարձրացվել է կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակում, ապա հարկ եմ համարում անդրադառնալ այդ վերահսկողության առանձնահատկություններին:

Այսպես՝ սահմանադրական արդարադատության բնագավառում, ի թիվս այլնի, գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նպատակով տվյալ անձի կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան: Նշված սահմանադրական դրույթն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ

9


հողվածում, որը կանոնակարգելով կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Կոնկրետ վերահսկողության պարագայում, ի թիվս այլնի, անհրաժեշտ պայման է, որ անձի կողմից դատական պաշտպանության միջոցները սպառելու արդյունքում կայացված վերջնական դատական ակտով վիճարկվող դրույթը կիրառված լինի իր նկատմամբ, և կիրառման արդյունքում համապատասխան պատճառահետևանքային կապի առկայության համատեքստում խախտված լինի իր սահմանադրական կոնկրետ իրավունքը («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդված):

Սահմանադրականը դատարանը, 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ անդրադառնալով կոնկրետ սահմանադրական վերահսկողության ինստիտուտին, նշել է, որ անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունն է: Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանում կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակում անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իր նկատմամբ կիրառված նորմի սահմանադրականության գնահատման միջոցով կարող է տեղի ունենալ բացառապես կոնկրետ փաստական հանգամանքների հիման վրա հարուցված կոնկրետ գործի շրջանակում: Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող են դառնալ ենթադրյալ



սահմանադրականության վերաբերյալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են կոնկրետ փաստական հանգամանքների հիման վրա հարուցված կոնկրետ գործով դատարանի կողմից կիրառված նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարց: Ավելին՝ Սահմանադրական դատարանն իր հերթին կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս իր մեկնաբանություններն ու դիրքորոշումները կառուցում է կոնկրետ գործով փաստական հանգամանքներից ելնելով: Փաստորեն, կոնկրետ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու Սահմանադրական դատարանի լիազորությունը կարող է իրացվել Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ տվյալ վերահսկողության շրջանակում ներկայացված դիմումների քննության և լուծման առանձնահատկությունների պահպանմամբ: Հետևաբար Սահմանադրական դատարանը, լինելով համապատասխան իրավակարգավորումներով կաշկանդված, կոնկրետ գործի պարագայում չի կարող հայեցողաբար կիրառել և մեկնաբանել տվյալ վերահսկողությանը բնորոշ առանձնահատկությունները:

Ի տարբերություն կոնկրետ սահմանադրական վերահսկողության՝ վերացական սահմանադրական վերահսկողության պարագայում սահմանադրական արդարադատությունն իրականացվում է անորոշ հանգամանքներով պայմանավորված իրավահարաբերությունների նկատմամբ, որպիսի դեպքում ստուգվում է դիմողի կողմից վիճարկվող նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը՝ անկախ կոնկրետ դեպքում տվյալ նորմերի կիրառման հանգամանքի:

Տվյալ դեպքում թեև Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը վերաբերում է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման այն դեպքին, երբ անձը Միջազգային դատարանի վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու



պահին ունեցել է այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն, այդուհանդերձ Սահմանադրական դատարանն իր որոշման պատճառաբանությունները կառուցել է այն անձանց մասով, ովքեր Միջազգային դատարանի վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին չեն ունեցել այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն՝ ներպետական դատական պաշտպանության միջոցները չսպառելու պատճառով:

Միաժամանակ սույն գործով Սահմանադրական դատարանն դիմելու առիթ հանդիսացած դատական գործերի⁴ ուսումնասիրությունից հետևում է հետևյալը.

դիմողները ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից իրենց նկատմամբ կայացված վճիռները չեն բողոքարկել վերադատության (համապատասխանաբար վերաքննության և վճարբեկության) կարգով, որպիսի պայմաններում էլ նշված դատական ակտերը 2008 և 2009 թվականներին մտել են օրինական ուժի մեջ (հարկ եմ համարում նշել, որ սույն դիմումի առիթ հանդիսացած տասներեք դատական գործերից տասներկուսի դեպքում դիմողների նկատմամբ կայացված վճիռները չեն բողոքարկվել վերաքննության կարգով և ըստ այդմ՝ 2008 թվականին օրինական ուժ են ստացել, և միայն թիվ ԼԴ/0958/02/08 դատական գործով կայացված վճռի դեմ է ներկայացվել վերաքննիչ բողոք, որպիսի բողոքը վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ վերադարձվել է՝ թերությունները վերացնելու համար, և բողոքաբերի կողմից կրկին բողոք չբերելու պայմաններում վերջինիս նկատմամբ կայացված վճիռը 2009 թվականին մտել է օրինական ուժի մեջ): Եվ միայն Եվրոպական դատարանի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 11-ին «Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ

⁴ Դիմողների առնչությամբ հարուցված դատական գործերը հետևյալն են՝ թիվ ԼԴ/1218/02/08, ԼԴ/1327/02/08, ԼԴ/0862/02/08, ԼԴ/0958/02/08, ԼԴ/0858/02/08, ԼԴ/1139/02/08, ԼԴ/1345/02/08, ԼԴ/1305/02/08, ԼԴ/1186/02/08, ԼԴ/1273/02/08, ԼԴ/1198/02/08, ԼԴ/0930/02/08, ԼԴ/1283/02/08 քաղաքացիական գործեր:

12


թիվ 71306/11) գործով կայացված վճիռ⁵ հետո, երբ Եվրոպական դատարանը ճանաչել է նշված գործով դիմումատուների՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրենց գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտում, սույն գործով դիմողներն իրենց նկատմամբ հարուցված դատական գործերով Վերաքննիչ դատարան են ներկայացրել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմումներ՝ որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի հիշյալ՝ «Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի» (գանգատ թիվ 71306/11) գործով կայացված վճիռը:

Վերոնշյալ փաստերից հետևում է, որ դիմողները, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից կայացված վճիռների դեմ չներկայացնելով վերաքննիչ և այնուհետև վճռաբեկ բողոքներ, նշված գործերով Եվրոպական դատարանի կողմից «Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի» գործով կայացված վճռի ուժի մեջ մտնելու պահի դրությամբ չեն սպառել իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, այսինքն՝ չեն փորձել բողոքարկման միջոցով իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնել վերադաս դատական ատյաններում: Նման փաստերի առկայության պայմաններում ստացվում է մի իրավիճակ, որ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կոնկրետ դեպքի, այն է՝ Եվրոպական դատարանի կողմից Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի խախտումը ճանաչելու դեպքում սահմանել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու հնարավորություն այն անձանց համար, ովքեր իրենց նկատմամբ հարուցված դատական գործերով ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները չեն սպառել, որպիսի հիմքով և չէին էլ կարող

⁵ Վճիռը վերջնական է դարձել 2019 թվականի հունվարի 11-ին:



Կոնվենցիայի ուժով Եվրոպական դատարան դիմելու իրավունք ունենալ: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը խոսել է մի իրավիճակի մասին, որպիսի դեպքում անձինք, չսպառելով դատական պաշտպանության բոլոր միջոցները, կարող են օգտվել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու հնարավորությունից, ինչը համարում եմ անընդունելի հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ՝ Օրենսգիրքը նախատեսում է գործին մասնակցող անձանց կողմից դատական ակտին իրենց անհամաձայնությունը հայտնելու միայն մեկ կառուցակարգ, այն է՝ դատական ակտի վերադասության կարգով բողոքարկումը: Իսկ օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ դատական ակտի բողոքարկումը կասեցնում է դրա օրինական ուժի մեջ մտնելը, ուստի դատական ակտի բողոքարկման ժամկետի ավարտից հետո սկսվում է դրա իրավական գործողությունը, որի արդյունքում կողմերի միջև առկա վիճելի իրավահարաբերությունները դառնում են անվիճելի: Նման իրավակարգավորումն առաջին հերթին կարևորվում է գործին մասնակցող անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության տեսանկյունից: Անձինք իրավունք ունեն ակնկալելու, որ իրենց քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող գործով կայացված դատական ակտը, մտնելով օրինական ուժի մեջ, գործնականում ձեռք է բերելու վերջնական դարձած դատական ակտին բնորոշ բոլոր հատկանիշները: Իսկ այդպիսի հատկանիշներից մեկը դատական ակտի անհերքելիությունն է: Անհերքելիության ուժով դատական ակտի բողոքարկման ժամկետն ավարտվելուց հետո այն դառնում է վերջնական և չի կարող կասկածի տակ դրվել կամ վերանայվել ինչպես կողմերի նախաձեռնությամբ, այնպես էլ վերադաս դատարանների կողմից: Նման պայմաններում գործում է այն կանխավարկածը, որ գործին մասնակցող անձինք համաձայնվել են ընդունել դատական ակտով իրենց համար սահմանված իրավունքները և պարտականությունները, որպիսի պայմաններում գործին

մասնակցող մյուս անձինք ձեռք են բերում դատական ակտով իրենց համար սահմանված իրավունքների վերաբերյալ լեզիտիմ ակնկալիք: Դրան համապատասխան՝ գործին մասնակցող անձինք համատեղում են իրենց հետագա վարքագիծը դատական ակտով իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների հետ: Նշվածից հետևում է, որ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ քննարկվող հատկանիշը, ըստ էության, նպատակաուղղված է իրավական որոշակիության սկզբունքի ապահովմանը՝ երաշխավորելով ոչ միայն կողմերի միջև առկա վեճը լուծող դատական ակտի կայունությունը և գործին մասնակցող անձանց կողմից իրենց վերաբերյալ կայացված դատական ակտին վստահելու իրավունքը, այլ նաև կոչված է ամրապնդելու դատարանի նկատմամբ հանրային վստահությունը:

Միաժամանակ, պետք է փաստել, որ դատական ակտի անհերքելիության հատկանիշը բացարձակ չէ, ուստի հնարավոր է այս կանոնից որոշակի բացառությունների նախատեսում: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ իրավունքի գերակայության բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը, որն, ի թիվս այլնի, պահանջում է, որ եթե դատարանը վերջնականապես լուծել է վեճը, ապա դատարանի որոշումը կասկածի տակ չպետք է դրվի (BRUMĂRESCU v. ROMANIA, app. no. 28342/95, 28.10.1999, §61): Այդ սկզբունքից շեղումն արդարացվում է միայն՝ էական և ծանրակշիռ հանգամանքներով պայմանավորված (ROȘCA v. MOLDOVA, app. no. 6267/02, 22.03.2005, §25): Ինչ վերաբերում է դատական սխալների ուղղման և ներպետական իրավունքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությանը, դրանք չպետք է իրականացվեն ցանկացած գնով՝ հատկապես անտեսելով գործին մասնակցող անձանց լեզիտիմ ակնկալիքն իրավական որոշակիության նկատմամբ: Իշխանությունները պետք է ապահովեն արդարացի հավասարակշռություն դիմումատուների շահերի և արդարադատության պատշաճ իրականացման միջև (BEZRUKOVY v. RUSSIA, application no. 34616/02, 10.05.2012, §43):



Փաստորեն, իրավական որոշակիության տարր հանդիսացող դատական ակտի անհերքելիության հատկանիշից շեղում, էական և ծանրակշիռ հանգամանքների մատնանշմամբ, սկզբունքորեն հնարավոր է՝ պայմանով, որ այդպիսի շեղումները չհանգեցնեն իրավական որոշակիության սկզբունքի լրիվ կորստի. այլ խոսքով՝ պետք է ապահովվի արդարացի հավասարակշռություն քննարկվող սկզբունքի և դրան հակակշռող էական և ծանրակշիռ հանգամանքների միջև: Ավելին՝ Սահմանադրական դատարանը ևս իր որոշմամբ մի կողմից կարևորել է *res judicata* սկզբունքի գոյությունը, իսկ մյուս կողմից հենց նույն որոշմամբ եկել է հակառակ եզրահանգման՝ նախատեսելով օրենսդրի կողմից չնախատեսված դեպքում (դատական պաշտպանության բոլոր միջոցները չսպառելու դեպքում) վերջնական դատական ակտի վերանայման հնարավորություն որոշակի խումբ անձանց համար:

Բացի այդ, հարկ եմ համարում նշել, որ Դիմողները վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը բարձրացրել են հիմնականում որոշակիության սկզբունքին չհամապատասխանելու տեսանկյունից՝ նշելով, որ օրենսդիրը նշված դրույթը պետք է սահմաներ այնքան հստակ, որ դատավարության կողմերի համար հասկանալի լիներ, թե նոր հանգամանքի հիմքով որ դեպքում իրենք կարող են իրենց իրավունքների պաշտպանության հարցով դիմել դատարան:


Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցին որոշակիության սկզբունքի տեսանկյունից նշել է, որ «(...) օրենսդիրը վիճարկվող դրույթը սահմանել է բավարար հստակությամբ, և անձը ողջամտորեն ի վիճակի է կանխատեսելու իր վարքագծի հետևանքները: Նման պայմաններում վիճարկվող դրույթը որոշակիության առումով խնդրահարույց չէ» (տե՛ս՝ կետ 76):

Փաստորեն, Սահմանադրական դատարանը մի դեպքում վիճարկվող դրույթը դիտարկել է բավարար հստակությամբ սահմանված և որոշակիության առումով ոչ խնդրահարույց, իսկ մյուս դեպքում որոշմամբ տվյալ դրույթի մասով եկել է այնպիսի եզրահանգման, որպիսի եզրահանգման պայմաններում դրույթը դարձել է անորոշ՝

ելնելով Սահմանադրական դատարանի որոշման և մասնավորապես դրա եզրափակիչ մասի շարադրանքից: Արդյունքում ստացվում է մի իրավիճակ, երբ իր կարգավորմամբ խիստ որոշակի դրույթը Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում վերածվել է բավականին անորոշ դրույթի:

Ավելին՝ Սահմանադրական դատարանն իր նման դիրքորոշումը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Դիմողների գործերով կայացված դատական ակտերը վերադաս ատյաններում բողոքարկումը, այն դեպքում, երբ նրանք իրենց վիճարկված իրավունքի պաշտպանության հարցում հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար չունեին, ՄԻԵԴ-ի վճռի կամ որոշման հիմքով հիշյալ դատական ակտերի վերանայման համար որպես պարտադիր պայման առաջադրելը հանդիսանում է չափազանցված ձևապաշտություն: Սահմանադրական դատարանի այս մոտեցումն իր արձանագրումն ունի նաև ՄԻԵԴ-ի պրակտիկայում, երբ այն, բազմիցս առերեսվելով անհատական իրավունքների կամ ազատությունների խախտման համատեքստերին, վերահաստատելով ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման հիմնարար կարևորությունը ՄԻԵԿ-ի համակարգի արդյունավետ գործունեության համար, այդուհանդերձ խիստ առանձնահատուկ իրավիճակների մասով արձանագրել է, որ ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու պահանջը ձևական բնույթ չի կրում, և եթե նման պաշտպանության միջոցը հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար չի ընձեռում (ներառյալ ձևավորված պրակտիկայի պայմաններում ներկայացված բողոքների ելքերի կանխատեսելիությունը) դրա արդյունավետության իմաստով, ապա դրանց չսպառումը չի կարող խոչընդոտ հանդիսանալ ՄԻԵԴ-ի կողմից համապատասխան դիմումի ընդունելիության համար» (տե՛ս՝ կետ 121):

Նշվածի կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ Եվրոպական դատարանը կայուն պրակտիկա է ձևավորել Կոնվենցիայի 35-րդ հոդվածով



նախատեսված իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառելու կանոնի առնչությամբ: Այսպես՝ Եվրոպական դատարանը նշել է, որ իր դերը Պայմանավորվող պետությունների կողմից Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունների կատարումը վերահսկելն է (CHIRAGOV AND OTHERS v. ARMENIA, app. no. 13216/05, 16.06.2015, §115): Միաժամանակ Եվրոպական դատարանը շեշտադրել է, որ վերջինս առաջին ատյանի դատարանն է. այն չունի կարողություն՝ քննելու մեծ թվով գործեր, որոնց դեպքում պահանջվում է պարզել հիմնական փաստերը կամ հաշվարկել դրամական հատուցում, և ոչ էլ դա համապատասխանում է իր՝ որպես միջազգային դատարանի գործառույթին. գործառույթներ, որոնք սկզբունքորեն և որպես արդյունավետ փորձ պետք է լինեն ներպետական մարմնի իրավասության շրջանակներում (DEMOPOULOS AND OTHERS v. TURKEY, app. no. 46113/99, 3843/02, 13751/02, 13466/03, 10200/04, 14163/04, 19993/04, 21819/04, 01.03.2010, §69): Պետություններն ազատվում են միջազգային ատյանի առջև իրենց գործողությունների համար պատասխան տալուց, քանի դեռ հնարավորություն չեն ունեցել խնդիրն իրենց իրավական համակարգի միջոցով լուծելու, իսկ նրանք, ովքեր ցանկանում են պետության դեմ բողոքների շրջանակներում վկայակոչել Դատարանի վերահսկողական իրավազորությունը, պարտավոր են առաջին հերթին օգտվել ներպետական իրավական համակարգով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից: Մինևույն ժամանակ, Եվրոպական դատարանը գտել է, որ ոչ պատշաճ կամ անարդյունավետ միջոցները սպառելու պարտավորություն նախատեսված չէ (AKDIVAR AND OTHERS v. TURKEY, app. no. 21893/93, 16.09.1996, §65,67): Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման ոլորտում առկա է ապացուցման պարտականության բաշխում: Իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հարցը բարձրացնող Կառավարությունն է պարտավոր Դատարանում ապացուցել այն փաստը, որ այդ միջոցը եղել է արդյունավետ և տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի. այսինքն՝ այն



եղել է մատչելի, հնարավորություն է տվել դիմումատուին փոխհատուցում ստանալու իր բողոքների մասով և ապահովել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար: Սակայն, այն դեպքում, երբ ապացուցման այս պարտականությունը կատարվում է, դիմումատուն է պարտավոր ապացուցել, որ Կառավարության ներկայացրած իրավական պաշտպանության միջոցն իրականում սպառվել է կամ որոշակի պատճառներով գործի կոնկրետ հանգամանքներում եղել է ոչ պատշաճ և անարդյունավետ, կամ որ գոյություն են ունեցել հատուկ հանգամանքներ, որոնց շնորհիվ նա ազատվել է այդ պահանջը կատարելու պարտականությունից (AKDIVAR AND OTHERS v. TURKEY, app. no. 21893/93, 16.09.1996, §68):

Ընդհանրացնելով Կոնվենցիայի 35-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառելու կանոնի վերաբերյալ Եվրոպական դատարանի պրակտիկան՝ կարող ենք գալ այն եզրահանգման, որ Եվրոպական դատարանի դիմելու իրավասություն ձեռք բերելու ընդհանուր կանոնը իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառելն է: Միաժամանակ Եվրոպական դատարանը թույլատրում է այս ընդհանուր կանոնից շեղումներ բացառիկ դեպքերում: Սակայն յուրաքանչյուր դեպքում ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման հարցը քննարկելիս Եվրոպական դատարանում գործում են ապացուցման պարտականության բաշխման հստակ կանոններ: Այսինքն՝ Եվրոպական դատարանը հիշյալ կանոնից շեղում թույլատրում է միայն տվյալ գործով կողմերին լսելուց հետո և նրանց ներկայացրած ապացույցների բազմակողմանի հետազոտման արդյունքում:

Փաստորեն, Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 35-րդ հոդվածով նախատեսված՝ իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառելու կանոնից բացառությունը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ ներպետական դատական պաշտպանության միջոցները չսպառած անձանց և մյուս կողմի ներկայացրած ապացույցների հետազոտման արդյունքում Եվրոպական դատարանը հաստատում է այդ միջոցների անարդյունավետությունը: Նման



պայմաններում գտնում եմ, որ սույն գործով Սահմանադրական դատարանի կողմից իրավական պաշտպանության ողջամիտ հեռանկարի բացակայության վերաբերյալ եզրահանգումը կարող էր կատարվել բացառապես այն դեպքում, երբ դիմողների կողմից դատական պաշտպանության միջոցների չսպառման առնչությամբ Եվրոպական դատարանը կարձանագրեր այդ միջոցների անարդյունավետությունը: Հետևաբար սույն գործով դիմողների կողմից՝ դատական պաշտպանության միջոցների սպառման անարդյունավետության վերաբերյալ Եվրոպական դատարանի դիրքորոշման բացակայության պայմաններում իրավական պաշտպանության ողջամիտ հեռանկարի բացակայության վերաբերյալ ցանկացած եզրահանգում ոչ այլ ինչ է, քան ենթադրությունների վրա հիմնված գնահատողական դատողություն:

Բացի այդ, Սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումից հետևում է, որ Սահմանադրական դատարանը դատական ակտերը վերադաս դատական ատյաններում բողոքարկելը համարել է չափազանցված ձևապաշտություն, մինչդեռ իմ գնահատմամբ՝ դատական ակտի բողոքարկման իրավունքին նման որակում տալը լուրջ ռիսկեր կարող է պարունակել: Մասնավորապես՝ նման դիրքորոշման արդյունքում խրախուսելի է դառնում դատավարության մասնակիցների կողմից գործի առնչությամբ որևէ համոզմունք ձևավորելու դեպքում առհասարակ դատական ակտերի չբողոքարկելը, ինչն իմ կողմից խիստ անընդունելի է համարվում: Իսկ դատական գործի առնչությամբ որևէ համոզմունք ձևավորելը ենթադրում է սուբյեկտիվ գնահատում, որը յուրաքանչյուրի դեպքում կարող է տարբեր լինել: Այսինքն՝ ստեղծվում է մի իրավիճակ, երբ նման կատեգորիայի անձինք, չսպառելով դատական պաշտպանության բոլոր միջոցները, կարող են օգտվել այնպիսի երաշխիքներից, որոնք օրենսդրի կողմից նախատեսվել են բացառապես այն անձանց համար, ովքեր իրենց բողոքարկման իրավունքն իրացնելու արդյունքում սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Միաժամանակ Սահմանադրական դատարանը, սույն գործով բարձրացված հարցը դիտարկելով որպես նոր հանգամանքի «հորիզոնական» ազդեցության դեպք, վկայակոչել է Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1645 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները: Մինչդեռ գտնում եմ, որ նշված որոշմամբ քննարկված հարցի կարգավորման առարկան որևէ աղերս չի կարող ունենալ սույն գործով բարձրացված հարցի հետ: Մասնավորապես՝ նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել վիճարկվող դրույթով այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման չնախատեսումը, որոնք դատական պաշտպանության միջոցները սպառել են Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը: Այսինքն՝ հիշյալ որոշման պարագայում նշված եզրահանգումը վերաբերում է այն անձանց, որոնք սպառել են դատական պաշտպանության միջոցները Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, մինչդեռ սույն գործով կայացված որոշումն ինչպես արդեն նշվեց, վերաբերում է այն անձանց, ովքեր Միջազգային դատարանի վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին չեն սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները: Նման պայմաններում Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1645 որոշման վկայակոչումը սույն գործով բարձրացված հարցի պարագայում դառնում է հիմնազուրկ:

Բացի այդ, հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը սույն գործով դիմողներից Լիպարիտ, Լուսինե, Նարե Ամիրջանյանների, Հերիքնազ

 21

Ներկարարյանի և Լուսիկ Հորոսյանի մասով գործի վարույթը 2025 թվականի փետրվարի 11-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ կարճել է այն պատճառաբանությամբ, որ վերջիններս մինչև Սահմանադրական դատարան դիմելը չեն սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Փաստորեն, Սահմանադրական դատարանը մի կողմից սույն որոշմամբ համարել է, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման որևէ սկզբունքի՝ Եվրոպական դատարանի կողմից խախտված ճանաչվելու դեպքում նոր հանգամանքով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն այն անձինք, որոնք չեն սպառել ներպետական դատական պաշտպանության միջոցները՝ կարևորելով այն հանգամանքը, որ վերջիններս չեն ունեցել ողջամիտ հեռանկար իրենց իրավունքի պաշտպանության հարցում հաջողության հասնելու համար, իսկ մյուս կողմից, հակասելով իր տված դիրքորոշմանը, նույն փաստական հանգամանքներով դատական գործերով մյուս խումբ անձանց մասով նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթում դատական պաշտպանության միջոցները չսպառելը համարել է վերջիններիս նկատմամբ հարուցված գործի վարույթը կարճելու հիմք:

Ամփոփելով վերոնշյալ դիրքորոշումները՝ գտնում եմ, որ վիճարկվող՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը ենթադրում է խիստ որոշակի կարգավորում պարունակող դրույթ՝ ուղղված լինելով այն անձանց կողմից նոր հանգամանքի հիմքով դիմում ներկայացնելու իրավունքին, որոնք Միջազգային դատարանի վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել են այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն: Մինչդեռ Սահմանադրական դատարանի քննարկվող որոշումը միտված է այն անձանց

22


կողմից նոր հանգամանքի հիմքով դիմում ներկայացնելու հնարավորություն տալուն, ովքեր Միջազգային դատարանի վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահի դրությամբ չեն պահպանել Միջազգային դատարանի դիմելու իրավունքն իրացնելու համար միջազգային պայմանագրով նախատեսված պահանջները (ժամկետները), այն է՝ չեն սպառել ներպետական դատական պաշտպանության միջոցները: Փաստորեն, Սահմանադրական դատարանը սույն որոշմամբ որդեգրել է այն մոտեցումը, համաձայն որի՝ այն անձինք, ովքեր Միջազգային դատարանի վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահի դրությամբ չեն պահպանել Միջազգային դատարանի դիմելու իրավունքն իրացնելու համար միջազգային պայմանագրով նախատեսված պահանջները (ժամկետները), այն է՝ չեն սպառել ներպետական դատական պաշտպանության միջոցները, կարող են օգտվել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունքից: Հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանությունները՝ նշված մոտեցումը համարում եմ խիստ անընդունելի:

ԴԱՏԱՎՈՐ՝



Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«21» փետրվարի 2025թ.